4

Պրոֆեսորը
60 տարեկան է

5

Անվտանգությունը
հրդեհի ժամանակ

6

Հաղորդակցման
գիտակ

7

Մի ուտոպիայի
պատմություն

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA

ով իրազեկված է, նա զգաստացված է

արտակարգ թերթ

N 21 (390) 10.6.2011 - 16.6.2011 www.emergency.am

Պույեուէ հրաբխի ժայթքումը դադարում է

Չիլիական Պույեուէ հրաբխի ժայթքումը սկսել է թուլանալ, սակայն մոխրի ամպերը խառնարանից կարտանետվեն եւս մի քանի օր:

Պույեուէ հրաբուխը, որը Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյից 800 կմ հարավ է ընկած՝ Անդերի չիլիական կողմի վրա, սկսել էր ժայթքել անցյալ շաբաթ: Դրանից առաջ հրաբխի շրջանում ստորգետնյա ցնցումներ էին գրանցվել: Չիլիի արտակարգ իրավիճակների բյուրոն ժամում միջինը 230 ցնցում է արձանագրել:

Չիլիի իշխանությունները ավելի քան 3,5 հազար մարդ էին տարհանել աղետի գոտուց: Գետնի վրա տասը մետր երկարությամբ եւ հինգ կիլոմետր լայնությամբ ճեղք է առաջացել:

Հրաբխի խառնարանից ծխի եւ մոխրի հսկա ամպեր են դուրս հորդել: Մոխիրը սկզբում անցել է Անդերի վրայով, ապա իջել արգենտինական Սան-Կառլոս-դե-Բարիլոչե քաղաքի շրջանում՝ լեռնաշղթայի մյուս կողմում: Դրա պատճառով փակվել է քաղաքի օդանավակայանը:

Տեղի իշխանությունները կոչ են արել բնակիչներին հրաբխային մոխրի նստելու դեպքում, ինչը հնարավոր է, նախազգուշական միջոցներ ձեռնարկել՝ առանց խիստ անհրաժեշտության տնից դուրս չգալ, մթերքների եւ ջրի պաշար հավաքել:

Չիլին սեյսմիկ բարձր ակտիվության գոտում է: 2010 թվականի փետրվարին երկրի կենտրոնական մասում գտնվող Կոնսեպսիոն քաղաքից 115 կմ հյուսիս տեղի ունեցավ 8.8 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ: Այն ցունամի առաջացրեց, որի ալիքների բարձրությունը հասավ գրեթե 3 մետրի: Զոհվեց 800-ից ավելի մարդ, 1,2 հազարը՝ անհետ կորան, վնասվեց 1,5 միլիոն տուն:

Չիլիով է անցնում խաղաղօվկիանոսյան «Կրակե օղակը»՝ հրաբուխների եւ տեկտոնական բեկվածքների 40 հազար կիլոմետրանոց շերտը: Այն գոտեւորում է Խաղաղ օվկիանոսը, ձգվում է Հարավային եւ Հյուսիսային Ամերիկաների ափերով՝ մինչեւ Ալյասկայի հարավը, այնուհետեւ թեքվում է դեպի Ճապոնիա, Ֆիլիպիններ եւ Ինդոնեզիա՝ ավարտվելով Նոր Գվինեա կղզու, Նոր Զելանդիայի եւ հարավ-արեւմտյան Օկեանիայի շրջանում: Հենց «Կրակե օղակում» են գտնվում մոլորակի հայտնի հրաբուխների մեծ մասը: Այնտեղ էլ տեղի է ունենում բոլոր երկրաշարժերի 90 տոկոսը:

Գերմանացի փորձագետները մեկ շաբաթ ունեն վարակի պատճառը պարզելու համար

Գերմանացի մասնագետներն ավելի ու ավելի քիչ ժամանակ ունեն մահացու վտանգավոր աղիքային վարակի աղբյուրը գտնելու համար, որը Գերմանիայում համաճարակի պատճառ դարձավ եւ վախեցրեց Եվրոպային ու Ռուսաստանին:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ինֆեկցիոն հիվանդությունների գծով փորձագիտական հանձնաժողովի տնօրեն Գյունել Ռոդյեն հայտարարել է, որ եթե դա տեղի չունենա մեկ շաբաթվա ընթացքում, պատճառը գտնել այլեւս հնարավոր չի լինի:

Սակայն Գերմանիայի իշխանությունները լավատես են եւ պնդում են, որ ամենավատթարը՝ հիվանդության գագաթնակետը, արդեն ետեւում է, թեեւ խոստովանում են, որ զգոնությունը թուլացնելը դեռ վաղ է: Այդպիսի հայտարարությամբ հանդես է եկել երկրի առողջապահության նախարար Դանիել Բախրը: Նա ասել է նաեւ, որ հիվանդության դեպքերը նվազել են:

Իրավիճակի կայունացման մասին հայտնել է նաեւ առողջապահության հարցերով Համբուրգի սենատոր Կոռնելիա Պրյուֆեր-Շտորքսը: Հիվանդներից ոմանք արդեն դուրս են գրվել հիվանդանոցից, մյուսների վիճակը լավանում է, այնպես որ «հույսի նշույլներ» են հայտնվել, ասել է նա:

Ռոբերտ Կոխի անվան ինֆեկցիոն հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի բուժաշխատողները հաստատել են, որ վարակվածների թիվն այլեւս նման արագությամբ չի աճում, թեեւ միայն երեքշաբթի օրը գրանցվել է 94 նոր դեպք: Ինստիտուտում դժվարացել են կանխատեսումներ անել՝ կպահպանվի՞ այդ միտումը, թե՞ ոչ:

Մայիսի սկզբից, երբ Գերմանիայում հայտնի դարձավ հիվանդության առաջին դեպքերի մասին, վտանգավոր բարդություններից՝ երիկամների անբավարարությունից, մահացավ 24 մարդ: 23-ը Գերմանիայից էին, մեկը՝ Շվեդիայից: Վարակվեց ավելի քան 2400 մարդ, որոնցից 100-ը՝ տարբեր եվրոպական երկրներում եւ ԱՄՆ-ում:

Միջազգային փորձագետները քննադատում են Գերմանիային դանդաղ արձագանքման եւ հետաքննական «ձախողումների» համար: Ամերիկացի մասնագետներից մեկը հայտարարել է. «Եթե մենք նվազագույնը 200 դեպք ունենայինք, 5 օրում կկարողանայինք ամեն ինչ պարզել»: Գերմանացի գործընկերների գործողությունները նա գնահատել է որպես «անկազմակերպ», իսկ հետաքննության ընթացքը՝ «աղետ»:

Արտասահմանյան փորձագետների կարծիքով, համաճարակը սկսվելուն պես, պետք էր հնարավորինս շատ տեղեկություններ հավաքել հենց հիվանդներից: Հիմա արդեն, երբ բանջարեղենն անհետացել է խանութներից եւ փողոցներից, վարակի աղբյուրը գտնելն ավելի ու ավելի դժվար է դառնում:

Բացի դրանից, Գերմանիայի իշխանություններին հանդիմանում են, որ նրանք ի լուր ամենքի տարածել են չհաստատված հետեւություններ: Դա լրացուցիչ դժվարություններ ստեղծեց ֆերմերների համար, որոնք առանց այդ էլ ամեն օր ահռելի կորուստներ են ունենում: Դա տեղի ունեցավ, օրինակ՝ Իսպանական վարունգի հետ, որին, ինչպես պարզվեց, լրիվ անհիմն, կասկածում էին վարակի աղբյուր լինելու մեջ:

Արդյունքում Իսպանիան եւ մի շարք այլ երկրներ պահանջեցին Եվրամիության ղեկավարությունից փոխհատուցում տալ իրենց ֆերմերներին: Որպես օգնություն՝ նրանց խոստացան 150 միլիոն եվրո հատկացնել, բայց նրանք ասում են, որ միայն մեկ շաբաթվա ընթացում 417 միլիոն են կորցնում:

Իսպանական վարունգից հետո կասկածն ընկավ սոյայի ծիլերի վրա, որոնք աճում էին Գերմանիայի հյուսիսում. այստեղ վարակվածների ամենամեծ թիվն է գրանցվել:

>>> 3

ԱԻՆ

միացյալ հեռախոսահամարն է

1-01

Ուժեղ քամի

Հունիսի 2-ին, ժամը 17.55-ին Կոտայքի մարզից ահազանգ է ստացվել, որ ուժեղ քամու հետեւանքով պոկվել ու շուռ են եկել Չարենցավանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տանիքի թիթեղները:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ վնասվել է տանիքը՝ 300 քմ մակերեսով, որի զգալի մասը հրշեջ-փրկարարների ուժերով ապամոնտաժվել է: Վնասվել են նաեւ թիվ 5 եւ 2 միջնակարգ դպրոցների, 6-րդ թաղամասի թիվ 24 շենքի տանիքները եւ պոկվել է հաստոցաշինական գործարանի հանրակացարանի տանիքում տեղադրված 3 ալեհավաք:

Օպերատիվ խումբը եւ մարտական հաշվարկը մեկնել են նշված հասցեներով: Հրշեջ-փրկարարների ուժերով ապամոնտաժվել են թիվ 5 դպրոցի տանիքից՝ 40, թիվ 2 դպրոցի տանիքից՝ 25 քմ մակերեսով երկաթյա թիթեղներ, թիվ 24 շենքի ճաղավանդակը՝ 4,5 քմ մակերեսով եւ հանրակացարանի տանիքում տեղադրված ալեհավաքները:

Ծառը շրջվել է մարդկանց վրա

Հունիսի 2-ին, ժամը 23.00-ին տեղեկություն է ստացվել, որ ուժեղ քամու հետեւանքով Երեւանի պետական համալսարանի բակում ծառ է շրջվել՝ վնասելով անցորդներ, 1967 թ. ծնված Սամվել, 1969 թ. ծնված Գայանե եւ 1999 թ. ծնված Սոնա Դանիելյաններին:

Տուժածները տեղափոխվել են Երեւանի թիվ 1 համալսարանական հիվանդանոց, որտեղ առաջին բուժօգնություն ստանալով՝ դուրս են գրվել:

Քամի եւ անձրեւ

Հունիսի 3-ին Վայոց ձորի մարզում գրանցված հորդ անձրեւների եւ ուժեղ քամու հետեւանքով վնասվել են Ռինդ գյուղում՝ 40 հա եւ Աղավնաձոր գյուղում՝ 60 հա խաղողի այգիներ, տների ու անասնագոմերի տանիքներ՝ 310 քմ մակերեսով եւ էլեկտրասյուներ, ինչի հետեւանքով գյուղը հոսանքազրկվել է, իսկ գերեզմանատանն ընկել է 2 հուշաքար: Վնասներ են կրել նաեւ Եղեգնաձորի բնակիչները:

• Հունիսի 3-ին քամին վնասել է նաեւ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի թիվ 12 շենքի տանիքի կառուցատարրերը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրշեջ-փրկարարներն իրականացրել են տանիքի՝ 15 քմ մակերեսով թիթեղների ապամոնտաժում:

Ուժեղ քամու եւ հորդառատ անձրեւների հետեւանքով Կոտայքի մարզի Սոլակ գյուղում վնասվել են Ասատրյանին պատկանող տան տանիքի կառուցատարրերը՝ 30 քմ մակերեսով, Գառնի գյուղում՝ Ազատ գետի հունի բարձրացման հետեւանքով սելավաջրերը վնասել են գյուղամիջյան ճանապարհները՝ 500-600 մ երկարությամբ ու լցվել մոտակա խմելու ջրի պոմպակայան: Պոմպակայանի աշխատանքը դադարեցվել է, իրականացվել են ջրաբերուկներից մաքրման աշխատանքներ:

Կարկտահարություն

Հունիսի 2-ին ստացված տեղեկության համաձայն՝ հանրապետությունում տեղացած կարկտի հետեւանքով տուժել են Արմավիրի մարզի Փշատավան, Տանձուտ, Հայկավան, Արմավիր, Բամբակաշատ, Արեւիկ, Լուկաշին, Խանջյան, Արտամետ, Տալվորիկ, Լեռնագոգ համայնքները, Լոռու մարզում՝ Տաշիր քաղաքը, Արարատի մարզում՝ Լուսաշող, Լանջանիստ համայնքները, Գեղարքունիքի մարզում՝ Ճամբարակ, Աղբերք համայնքները, Արագածոտնի մարզում՝ Ոսկեթաս, Զովասար, Լեռնարոտ, Դիան համայնքները եւ Վայոց ձորի մարզում՝ Զեղեա համայնքը:

• Հունիսի 5-ին Լոռու մարզից հայտնել են, որ Ստեփանավանում տեղացած ուժեղ անձրեւի եւ կարկտի հետեւանքով վնասվել են մի քանի խանութների տանիքներ, ջարդվել են ապակիներ, ընկել են ծառեր եւ վնասվել ավտոմեքենաներ:

• Հունիսի 5-ին տեղացած կարկտի հետեւանքով Սյունիքի մարզի Խնածախ գյուղում վնասվել են պտղատու այգիներ եւ բանջարանոցներ՝ մոտ 4,5 հա մակերեսով:

• Հունիսի 5-ին Լոռու մարզի Լոռի Բերդ, Լեջան եւ Ամրակից գյուղերում տեղացած կարկտի հետեւանքով վնասվել են ցանքատարածքներ:

• Հունիսի 6-ին տեղացած կարկտի հետեւանքով վնասվել են Շիրակի մարզի Կրաշեն գյուղի ցանքատարածքները:

• Հունիսի 7-ին Լոռու մարզի Ուռուտ գյուղում ուժեղ կարկուտը վնասել է բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածքներն ու պտղատու այգիները:

Պատահար մայրաքաղաքում

Հունիսի 5-ին, ժամը 00.45-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Գայի պողոտայում գտնվող Հայկ Նահապետի արձանի մոտ վթարված ավտոմեքենայում հնարավոր է հրդեհ բռնկվի: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են «Մերսեդես-124» մակնիշի 26 OS 122 եւ «ՎԱԶ-2107» մակնիշի 61 OO 997 պետհամարանիշերով ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով «Մերսեդես-124» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1990 թ. ծնված Ղարիբ Մանուկյանը, «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1983 թ. ծնված Գեւորգ Միրաքյանը եւ մեքենաների ուղեւորներ՝ 1962 թ. ծնված Սամվել Գեւորգյանը, 1991 թ. ծնված Կարեն Կարապետյանը, 1984 թ. ծնված Միքայել Մանասերյանը եւ 1989 թ. ծնված Արա Ենգոյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ: Մինչ հրշեջ-փրկարարների ժամանելը՝ տուժածները տեղափոխվել են Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

Սողանքներն ակտիվացել են

Հունիսի 4-ին ստացված տեղեկության համաձայն՝ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղի գերեզմանատան մոտ սողանքային երեւույթներ են ակտիվացել:

Դեպքի վայր է մեկնել փրկարարական ուժերի վարչության օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ երկարատեւ հորդառատ անձրեւներից Գետահովիտ գյուղի գերեզմանատան վերեւի թաղամասում սողանքն ակտիվացել է, ինչի հետեւանքով վտանգավոր գոտում է հայտնվել 6 բնակելի տուն՝ 30 բնակչով: Նրանք տարհանվել են գյուղապետի կողմից տրամադրված ժամանակավոր կացարան: Հողամասերում առաջացել են ճեղքեր, եղածները լայնացել են, բնակելի տների պատերին առաջացել են լայնակի եւ ուղղաձիգ ճեղքեր:

Սողանքային գոտին ընդգրկում է մոտ 75 բնակելի տուն՝ 370 բնակչով:

• Հունիսի 5-ին, ժամը 16.10-ին Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ հորդ անձրեւի հետեւանքով Մեղրի-Երեւան ավտոճանապարհի 11-րդ կմ-ում (Վարդանիձոր գյուղի մոտ) հողաշերտի զանգվածը փլվել է ու փակել միջպետական նշանակության ավտոճանապարհի մոտ 100 մ երկարությամբ հատվածը: Երթեւեկությունն իրականացվում է շրջանցիկ ճանապարհով (Ճակատեն եւ Ծավ գյուղերով): Կատարված աշխատանքների արդյունքում երթեւեկությունը մասամբ վերականգնվել է:

• Հունիսի 6-ին, ժամը 15.16-ին Տավուշի մարզից ահազանգ է ստացվել, որ Իջեւանի թիվ 3 գերեզմանատան տարածքում ակտիվացել են սողանքային երեւույթներ:

Դեպքի վայր է մեկնել ՄՓՎ օպերատիվ խումբը: Երկարատեւ հորդառատ անձրեւներից գերեզմանատան տարածքում առաջացել է սողանք, ինչի հետեւանքով տեղաշարժվել են գերեզմանաքարեր, առաջացել են փլվածքներ: Իջեւանի քաղաքապետարանի կողմից տեղանքի ջրահեռացումն ապահովելու համար փորվել է մոտ 100 մ երկարությամբ առու:

• Հունիսի 7-ին, ժամը 11.16-ին Լոռու մարզից հայտնել են, որ տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով Թումանյան-Մարց միջհամայնքային ավտոճանապարհի 3-րդ կմ-ում հարակից սարալանջից հողազանգվածը սահել, լցվել է ճանապարհին՝ 15 մ երկարությամբ ճանապարհահատվածը դարձնելով անանցանելի:

Թումանյանի եւ Գուգարքի «Ճանշին» ՓԲԸ աշխատակիցներն իրականացրել են ճանապարհի մաքրման աշխատանքներ:

• Հունիսի 7-ին տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով Վայոց ձորի մարզի Սալի գյուղին հարակից սարալանջից հողազանգվածը սահել, լցվել է հանդամասի ճանապարհի վրա՝ այն դարձնելով անանցանելի:

Դեպքի մասին տեղյակ են պահվել մարզպետարանները:

Օձի խայթոց

Հունիսի 4-ին, ժամը 18.46-ին ստացված տեղեկության համաձայն՝ օձի խայթոցով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել Ոսկեվազ գյուղի

>>>

միջազգային լուրեր

Անտառային հրդեհներ՝ Արիզոնայում

ԱՄՆ-ի արեւմուտքում՝ Արիզոնա նահանգում անտառային հրդեհներ են մոլեգնում: Կրակի դեմ պայքարին մասնակցում է ավելի քան 2,5 հազար հրշեջ: Սակայն, չնայած գործադրվող ջանքերին, կրակի ճիրաններում հայտնված տարածքների մակերեսը ժամ առ ժամ մեծանում է: Դրան մասնավորապես նպաստում են եղանակային վատ պայմանները՝ ուժգին քամին եւ ցածր խոնավությունը: Օդերեւութաբանների կանխատեսումներով՝ մոտակա օրերին սպասվում են փոթորիկ եւ ամպրոպ: Մայիսի 29-ից մոլեգնող խոշոր հրդեհներից մեկը մոխրացրել է 78 հազար հեկտար տարածք: Տեղի բնակչությունը տարհանվել է: Հրդեհներից առաջացած ծուխը հասել է հարեւան Կոլորադո, Նեբրասկա եւ Կանզաս նահանգներ:

Անտառային պահպանության տեղական ծառայությունը հայտարարել է, որ հրդեհների առաջացման պատճառ է դարձել հակահրդեհային պահպանության կանոնների անտեսումը: Ըստ նախնական վարկածի՝ մի խումբ զբոսաշրջիկներ անտառում վառվող խարույկ են թողել:

Պայթյուն՝ նավթի գործարանում

Ուելսի հարավ-արեւմուտքում՝ Փեմբրուքում գտնվող նավթավերամշակման գործարանում հզոր պայթյուն է որոտացել: Նախնական տվյալներով՝ զոհվել է երկու մարդ:

Տեղական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ պայթյունի հետեւանքով նավթային պահեստներից մեկը լիովին ոչնչացվել է, մյուսը՝ լրջորեն վնասվել: Դեպքի վայր տասնյակ հրշեջ հաշվարկներ են ժամանել:

Պայթյունի պատճառները ճշտվում են:

Ջրհեղեղ՝ Բրազիլիայում

Բրազիլիայի հյուսիսային Ռորայմա նահանգում ռեկորդային հեղեղումների պատճառով արտակարգ դրություն է հայտարարվել:

Հորդ անձրեւներից վարարել է Ամազոնի վտակ Ռիու Բրանկու գետը: Ռիու Բրանկուի ջուրը բարձրացել է տասը մետրով, ինչը կես մետրով ավելի է 1976 թ. գրանցված ռեկորդից: Տասնյակ բնակավայրեր կտրվել են արտաքին աշխարհից:

Նահանգի քաղաքացիական պաշտպանության ծառայության տվյալներով՝ յոթ բնակավայր ամբողջությամբ ջրի տակ է անցել:

Երկու ավտոբուսային պատահար

Հունիսի 8-ին Թուրքիայում Ստամբուլից Տրապիզոն ընթացող ավտոբուսը վթարի է ենթարկվել, որից հետո հրդեհ է բռնկվել: Տեղական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ Ստամբուլից դուրս եկած ուղեւորատար ավտոբուսը առավոտյան ժամը 7-ի սահմաններում հարվածել է ճանապարհին տեղադրված ցուցանակներից մեկին: Հարվածից ավտոբուսի վառելիքի բաքը բռնկվել է: Հանկարծակի սկսված հրդեհի հետեւանքով կենդանի այրվել է 10 ուղեւոր, կան բազմաթիվ տուժածներ: Ըստ ականատեսների՝ ավտոբուսի վարորդն ընթացքի ժամանակ քնել է, ինչն էլ վթարի պատճառ է դարձել:

Նույն օրը Հնդկաստանի հյուսիսում ուղեւորներով լի ավտոբուսն ընկել է կամրջից

եւ բռնկվել: Առաջացած հրդեհի հետեւանքով բոլոր 22 ուղեւորները ողջակիզվել են: Ավտոբուսի վարորդը ոստիկաններին պատմել է, որ ինքը փորձել է շրջանցել հանկարծակի իր դիմաց հայտնված ավտոմեքենան, բայց չի կարողացել կառավարել ավտոբուսը եւ դուրս է եկել ճանապարհից: Վարորդից բացի փրկվել է միայն մեկ ուղեւոր, որը տեղափոխվել է հիվանդանոց:

արագ արձագանքման ծառայություններ

Գերմանացի փորձագետները մեկ շաբաթ ունեն վարակի պատճառը պարզելու համար

<<< 1 Սակայն թեսթերը դա չհաստատեցին: Այս անորոշության ու խուճապի ֆոնին, տարածվեցին զանազան հիպոթեզներ ու բամբասանքներ՝ Չեխիայում փորձաքննության ուղարկեցին Գերմանիայից ներկրված խոզի ու տավարի միսը, մյուսները մեղքը բարդեցին ռեակտորների վրա, որոնք թափոններից բիոգազ են արտադրում, երրորդներն էլ սկսեցին խոսել «ահաբեկչական դավադրության» մասին:

Բակտերիան անարդարացիորեն մուտանտ են համարում

Ինչպես հայտարարել էին ԱՀԿ-ում, նշված շտամը բժշկությանն անհայտ՝ լրիվ նոր միկրոօրգանիզմ է: Գիտնականները բացատրել են, որ սա աղիքային ցուպիկի երկու տարբեր բակտերիաների մուտացված ձեւն է, որը կրում է երկու հարուցիչների հատկությունները: 80 տոկոսով այն սովորական շտամ է, իսկ 20 տոկոսն ավելի վտանգավոր՝ գերտոքսիկ բակտերիա:

Ռուսաստանը, որը նույնպես արգելել էր բանջարեղենի ներկրումը Եվրամիությունից, կմիանա շտամի հետազոտման աշխատանքներին: Դրա օրինակն այստեղ կբերվի մոտ ապագայում:

Փորձագետ Ալեքսանդր Պոդկոլզինը կարծում է, որ Եվրոպայում շրջող շտամը մուտացված համարելն այնքան էլ ճիշտ չէ: Նրա խոսքերով, նման հարուցիչները, ինչպես E.coli աղիքային ցուպիկը, գիտնականներին վաղուց է հայտնի: Այն հիվանդության պատճառ է դառնում մոլորակի տարբեր ծայրերում, եւ յուրաքանչյուր հարուցիչ, որն ի հայտ է գալիս այս կամ այն համաճարակի ժամանակ, փոքր-ինչ տարբերվում է ավելի վաղ հայտնաբերվածներից:

Ռուս փորձագետը պատմել է, որ նոր շտամի հարուցած հիվանդությունն առաջին փուլում ոչնչով չի տարբերվում սովորական դիարեայից: Եւ միայն որոշ ժամանակ անց են ի հայտ գալիս դրան հատուկ բարդությունները՝ երիկամների անբավարարությունը եւ անեմիան:

Նրա տվյալներով, այս պաթոգենն արդեն լավ ուսումնասիրված է, եւ ռուս գիտնականները տվյալներ ունեն արտասահմանյան լաբորատորիաներից: «Հիմա մենք կարող ենք այս պաթոգենի տեսակավորում անցկացնել», - նշել է Պոդկոլզինը:

Նա նաեւ խորհուրդ է տվել վարակից խուսափելու համար չօգտագործել այն տարածքներից բերված բանջարեղենը, որտեղ հիվանդության բռնկումներ են գրանցվել: Գիտնականը զգուշացրել է, որ բանջարեղենը լվանալը թեեւ նվազեցնում է վարակվելու ռիսկը, այնուամենայնիվ, հարուցիչից ազատվել չի երաշխավորում:

>>> բնակիչ, 1999 թ. ծնված Աշոտ Մկրտչյանը: Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը բավարար է:

• Հունիսի 6-ին, ժամը 19.40-ի սահմաններում օձի խայթոցով Տավուշի մարզի Իջեւանի հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի բնակիչ, 1993 թ. ծնված Դավիթ Փիրումյանը: Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը բավարար է:

Երեխան ընկել է գետը

Հունիսի 7-ին, ժամը 16.02-ին Լոռու մարզից ահազանգ է ստացվել, որ Ամրակից գյուղի մոտ երեխա է ընկել Ձորագետ գետը եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ՄՓՎ եւ «Լոռե» հասարակական փրկարարական ջոկատները: Տեղում պարզվել է, որ տուժողն Ամրակից գյուղի բնակիչ, 1999 թ. ծնված Մանվել Մարգարյանն է:

Փրկարարների, ոստիկանների եւ տեղի բնակիչների ուժերով Ձորագետ գետի երկայնքով (Ամրակ, Ագարակ, Յաղդան, Կողես գյուղերի հարակից հատվածներում) իրականացվում են որոնողափրկարարական աշխատանքներ:

Դեղորայքային թունավորում

Հունիսի 8-ին «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 10.30-ին դեղորայքային թունավորումով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի բնակչուհի, 1991 թ. ծնված Սյուզաննա Մելիքյանը:

Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը բավարար է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 37 դեպք:

1921 РОСГОССТРАХ

ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ

«էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հունիսի 2-ից 9-ը ՍՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել է երկու երկրաշարժ: 3-4 բալանոց ստորգետնյա ցնցումները տեղի են ունեցել հունիսի 4-ին եւ 9-ին, համապատասխանաբար Եղեգնաձոր քաղաքից 24 կմ եւ Կապան քաղաքից 17 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Երկրորդ երկրաշարժը զգացվել է Կապան քաղաքում:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել ութ երկրաշարժ: Հունիսի 2-ին Թուրքիայի Հորասան քաղաքից 25 կմ դեպի հյուսիս-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունն է 3-4 բալ: Հաջորդ օրը Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում՝ Վարդենիս քաղաքից 22 կմ հյուսիս-արեւմուտք, գրանցվել է 3 բալանոց թույլ ցնցում, որը զգացվել է Գեղարքունիքի մարզի Նորակերտ եւ Ավազան գյուղերում: Հունիսի 4-ին Իրանի Արդաբիլ քաղաքից 46 կմ արեւմուտք տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ: Հունիսի 6-ին նույն ուժգնությամբ ստորգետնյա ցնցում է գրանցվել Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում՝ Զաքատալա քաղաքից 27 կմ հարավ-արեւմուտք: Հունիսի 5-ին Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում տեղի է ունեցել 3-4 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն, որի էպիկենտրոնը գտնվում է Հիրսա քաղաքից 17 կմ հյուսիս-արեւելք: Հունիսի 6-ին 3 բալանոց ստորգետնյա ցնցում է գրանցվել Ադրբեջան (Նախիջեւան)-Հայաստան սահմանային գոտում՝ Շարուր (Նորաշեն) քաղաքից 14 կմ հյուսիս-արեւմուտք եւ Թուրքիայում, Կարս քաղաքից 13 կմ հյուսիս-արեւմուտք, իսկ հունիսի 8-ին՝ Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում, Ղազախ քաղաքից 40 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ: Հունիսի 1-ին Խաղաղ օվկիանոսում՝ ճապոնական Հոնսյու կղզուց դեպի հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 6.3 մագնիտուդով երկրաշարժ: Հունիսի 5-ին Մակքուարի կղզուց դեպի արեւմուտք գրանցվել է երկրաշարժ, որն ունեցել է 6.0 մագնիտուդ: Նույն ուժով մյուս ուժեղ սեյսմիկ իրադարձությունը տեղի է ունեցել Պերուի Տակնա քաղաքից 130 կմ հյուսիս-արեւելք: Երկրաշարժերի հետեւանքով տուժածներ եւ ավերածություններ չկան:

ԱԻՆ ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում հունիսի 10-ին տեղ-տեղ, 11-ից 14-ը շրջանների զգալի մասում գիշերվա առաջին կեսին եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում կտեղա կարկուտ: Քամին՝ հարավային 2-7 մ/վրկ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հունիսի 10-ին կբարձրանա 1-2, 12-ի ցերեկը կնվազի 2-3 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը հունիսի 10-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +4... +9, Տավուշում՝ +10... +15, Լոռիում՝ +8... +11, Արագածոտնի նախալեռներում՝ +10... +14, Արարատյան դաշտում՝ +13... +16, Սյունիքի հովիտներում՝ +14… +17, Սյունիքի նախալեռներում՝ +8… +12, Արցախում՝ +13… +16 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը հունիսի 10-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +17... +22, Տավուշում՝ +20... +25, Լոռիում՝ +18... +23, Արագածոտնի նախալեռներում՝ +22... +26, Արարատյան դաշտում՝ +25... +28, Սյունիքի հովիտներում՝ +24… +28, Սյունիքի նախալեռներում՝ +18… +22, Արցախում՝ +21… +24 աստիճանի սահմաններում:

Երեւանում հունիսի 10-ին տեղումների հավանականությունը փոքր է, 11-ից 14-ն առավելապես գիշերվա առաջին եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հունիսի 10-ի գիշերը կտատանվի +13… +15, ցերեկը՝ +26… +28 աստիճանի սահմաններում:

Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

Հունիսի 2-9-ը

Բնական աղետներ

Հունիսի 2-ին տեղեկություն է ստացվել, որ Շահումյանի շրջանում տեղացել է անձրեւ եւ կարկուտ: Վնասի չափը ճշտվում է:

Հունիսի 2-ին տեղեկություն է ստացվել, որ Վանք եւ Առաջածոր գյուղերը կարկտահարվում են: Մարտակերտի շրջանում տեղացել է ուժեղ անձրեւ եւ կարկուտ: Կարկտահարվել են՝ Գետավան, Դրմբոն, Վաղուհաս, Հարությունագոմեր, Վերին Հոռաթաղ, Կճղոտ, Պողոսագոմեր, Չլդրան գյուղերը: Նախնական տվյալներով՝ վնասվել են բանջարանոցները:

Հունիսի 5-ին տեղեկություն է ստացվել, որ Ասկերանի շրջանում կարկուտ է տեղացել հետեւյալ գյուղերում՝ Պատարա, Դահիրավ, Դաշպուլաղ, Հարավ, Իվանյան, Մեկտի Շեն, Հովսեփավան:

Հունիսի 6-ին տեղացել է կարկուտ Շուշիի շրջանի Հին Շեն գյուղում, Հադրութում:

Հունիսի 8-ին կարկտահարվել են Ասկերանի շրջանի հետեւյալ գյուղերը՝ Խանսկ, Աստղաշեն, Նորագյուղ, Հովսեփավան, ինչպես նաեւ Ասկերանը:

Դժբախտ պատահար

Հունիսի 4-ին ահազանգ է ստացվել, որ Իսակով փողոցի թիվ 1 շենքի իրականացվող մոտ 3 մ խորությամբ հողային շինարարական աշխատանքների ժամանակ տեղի է ունեցել փլուզում, որի տակ մարդ է մնացել: Դեպքի վայր մեկնած փրկարարները փրկարարական աշխատանքներն իրականացնելուց հետո հողի տակից դուրս են բերել 1946 թ. ծնված՝ Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Վալերի Հայրիյանի մարմինը:

Սեյսմամեկուսացման ճանաչված մասնագետը 60 տարեկան է

Հունիսի 10-ին լրանում է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մելքումյանի վաթսունամյակը: Այդ առիթով հուլիսի 8-ին կազմակերպվել էր միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին պրոֆեսորի գործընկերները՝ գիտնականներ Հայաստանից, Իտալիայից, Հունաստանից, Պորտուգալիայից, Վրաստանից, Իրանից, Ռումինիայից ու Ռուսաստանից: Կային նաեւ ներկայացուցիչներ մեր երկրի շինարարական խոշոր կազմակերպություններից ու գերատեսչություններից՝ այդ թվում նաեւ Արտակարգ իրավիճակների նախարարությունից:

Գիտաժողովի ընդհանուր թեման սեյսմիկ շինարարությունն էր: Մասնակիցները կիսվում էին վերջին բացահայտումներով ու նորություններով, ներկայացնում էին իրենց երկրների փորձը:

- Այստեղ գտնվող գործընկերներին ես վաղուց եմ ճանաչում: Մենք տարբեր ժամանակներում հանդիպել ենք տարբեր կոնֆերանսներում: Հիմա էլ նպատակահարմար են գտել գալ ու իմ 60-ամյակի հետ կապված միջոցառմանը զեկուցել իրենց կատարած աշխատանքների մասին, ինչի համար շատ հպարտ եմ եւ ուրախ: Մեզ՝ գիտնականներիս համար, նմանատիպ կոնֆերանսներում ինֆորմացիա փոխանակելը կարեւորագույն խնդիր է, մենք այդպես ենք «սնվում», այդպես ենք հասկանում, թե ինչ է տեղի ունենում աշխարհում: Իմ գործընկերներն այսօր հարգել են ինձ, եկել են այստեղ, նրանց բերած ինֆորմացիան չափազանց կարեւոր է մեզ համար, իսկ մերն էլ՝ իրենց համար, - ասաց պրոֆեսոր Միքայել Մելքումյանը:

- Ես գիտեմ, որ Միքայել Մելքումյանն իր ամբողջ կյանքը նվիրել է սեյսմիկ պաշտպանությանն ու սեյսմակայուն շինարարությանը: Կարծում եմ՝ նրա կատարած աշխատանքների շնորհիվ է, որ Հայաստանն առաջ է գնացել սեյսմակայուն շինարարության ոլորտում ու հիմա աշխարհում առաջատար երկրներից է համարվում այս հարցում, - ասաց պորտուգալացի գիտնական Ռուջերո Բաիրառոն:

- Մելքումյանի տեխնոլոգիան աշխարհում հայտնի է որպես հիմքերի մեկուսացման մեթոդաբանություն, որն, իմ կարծիքով, սեյսմակայուն շինարարության ապագան է: Իմ միջազգային փորձից ելնելով կարող եմ ասել, որ ես աշխարհում ոչ մի այլ անձնավորության չգիտեմ, ով նախագծել ու կառուցել է այդքան մեծ թվով շենքեր, որտեղ օգտագործվել է հիմքերի մեկուսացման մեթոդը, - նշեց հույն գիտնական, սեյսմակայուն շինարարության պրոֆեսոր Ստավրոս Անագնոստոպուլոսը:

Միքայել Մելքումյանը սեյսմակայուն շինարարության ոլորտում ծանրակշիռ ներդրում ունի: Նա 180-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ եւ համահեղինակ է, այդ թվում նաեւ՝ 13 գրքերի, 10 նորմատիվ փաստաթղթերի ու 12 գյուտերի: Պրոֆեսորի մոտ 100 գիտական աշխատանքները հրատարակվել են աշխարհի 27 երկրների միջազգային լրագրերում եւ համաշխարհային, եվրոպական ու ազգային կոնֆերանսների աշխատություններում: Որպես գլխավոր կոնստրուկտոր կամ հեղինակային կոլեկտիվների անդամ՝ մշակել է բնակելի, քաղաքացիական եւ արդյունաբերական սեյսմակայուն կառույցների ավելի քան 80 նախագիծ:

Պրոֆեսոր Մելքումյանի աշխատանքները նվիրված են երկրաշարժերի հետեւանքների եւ տարբեր շինությունների ու կառուցվածքների զանգվածային փլուզման պատճառների վերլուծությանը, սեյսմակայուն կառույցների նոր կոնստրուկտիվ լուծումների ստեղծմանը, սեյսմիկ ազդեցության ներքո երկաթբետոնե կառուցվածքների ոչ առաձգական վարքի ուսումնասիրմանը, այդ կառուցվածքների դինամիկ հաշվարկային մոդելների ստեղծմանը, գոյություն ունեցող շենքերի սեյսմապաշտպանությանը եւ դրանց սեյսմակայունության բարձրացմանը, ինչպես նաեւ սեյսմակայուն շինարարության նոր տեխնոլոգիաների ստեղծմանը, ներդրմանը:

Միքայել Մելքումյանը ստեղծել է երկրաշարժից շենքերի պաշտպանության 2 եզակի մեթոդ՝ սեյսմամեկուսացում շենքի հիմքում եւ «մեկուսացված վերին հարկի» մեթոդը, որն իրականացվում է առանց շենքերի շահագործումը դադարեցնելու: Այս տեխնոլոգիաները հաջողությամբ ներդրվել են Հայաստանում. աշխարհում առաջին անգամ առանց բնակիչների տարհանման վերականգնվեցին ու սեյսմամեկուսացման միջոցով ամրացվեցին բնակելի եւ դպրոցական շենքերը: Ներկայումս Մելքումյանի աշխատանքների շնորհիվ Հայաստանում արդեն կա մոտ 40 սեյսմամեկուսացված շենք:

Մշակվում է Հայաստանի Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարությունը

Հունիսի 3-ին եւ 4-ին Ծաղկաձորում հավաքվել էր ՀՀ Աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) ռազմավարությունը մշակող աշխատանքային խումբը, որի կազմում էին ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, ԱՌՆ ոլորտի հետ առնչություն ունեցող շահագրգիռ նախարարությունների, միջազգային եւ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հերթական հանդիպման նպատակն էր սահմանել ԱՌՆ ռազմավարության ծեւաչափը, նպատակներն ու մի շարք կարեւոր դրույթներ: Քննարկման օրակարգում էին ԱՌՆ ռազմավարության մարտահրավերները, սկզբունքները, խնդիրները, ակնկալվող արդյունքները, ինչպես նաեւ ռազմավարության իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու գործողությունների ծրագիրը:

Խումբը նախեւառաջ սահմանեց ԱՌՆ ռազմավարության 2012-2015 թթ. նպատակը, որն է՝ ձեւավորել աղետակայուն երկիր՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության բարձրացումն ու կայուն զարգացումը: Այդ նպատակի իրագործմանը խոչընդոտող մարտահրավերների թվում նշվեցին ԱՌՆ դաշտում գործող կառույցների միջեւ ոչ արդյունավետ համագործակցությունը, ռեսուրսների անբավարարությունը, բնակչության տեղեկացվածության պակասը, սոցիալական զարգացման անբավարար մակարդակը եւ այլն:

Նշված խնդիրների լուծման համար, ըստ քննարկումների, անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային կոնվենցիաների պարտավորությունները, համալիր մոտեցում ցուցաբերել ԱՌՆ խնդիրներին, ապահովել մասնակցային գործընթացն ու հանրային վերահսկողությունը: Եթե այդ սկզբունքները կիրառվեն, ապա հնարավոր կլինի բարձրացնել ԱՌՆ աշխատանքների ընդհանուր արդյունավետությունը, զգալիորեն նվազեցնել աղետների վնասներն ու կորուստները՝ նվազեցնելով աղետների ռիսկերն ու ստեղծելով աղետակայուն երկիր:

Հանդիպման ավարտին, որպես աշխատանքային խմբի հետագա քայլ, որոշվեց մեկ ամսվա ընթացքում մշակել ԱՌՆ ռազմավարության նախնական տարբերակը եւ ներկայացնել այն շահագրգիռ կողմերի դիտարկմանը:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

www. education.am/CMSA.htm

Ակադեմիան իրականացնում է՝

1. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագիր՝ բակալավրի և մագիստրոսի աստիճան առկա ու հեռակա ուսուցմամբ,
2. Միջին մասնագիտական կրթական ծրագիր:

Հասցե Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ. 61-19-24 (ռեկտոր), 61-47-60, 61-19-21
Ռեկտոր Համլետ Շմավոնի Մաթևոսյան, փ/ծ գնդապետ
Ուսուցման ձևերը առկա, հեռակա
Ընդունելությունը Մաթեմատիկա (բանավոր), Հայոց լեզու (թելադրություն), Հայաստանի աշխարհագրություն (հարցազրույց):

Մասնագիտություններ	Ուսման տևողությունը (տարի), առկա	Ուսման տևողությունը (տարի), հեռակա	Շրջանավարտներին տրվող որակավորումը	Վարձի չափը (հազար դրամ) 2011-2012 ուս. տարի (առկա)	Վարձի չափը (հազար դրամ) 2011-2012 ուս. տարի (հեռակա)
Հրդեհային պաշտպանություն**	4	5	Ճարտարագիտության	Անվճար	180 140*
Փրկարարական գործ**	4	5	Ճարտարագիտության	Անվճար	180 140*
Ճգնաժամային կառավարում (մենեջմենթ)	4	5	Տնտեսագիտության	260	200 160*
Քաղաքացիական պաշտպանություն	4	5	Ճարտարագիտության	240	180 140*
Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մանկավարժություն)	4	5	Մանկավարժության	240	180 140*
Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում	4	5	Ճարտարագիտության	240	180 140*

Ծանոթություն. * Համակարգում աշխատողների համար
**** Նշված մասնագիտությունների ուսանողները չեն օգտվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման իրավունքից:**

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Բակալավրիատի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել մագիստրատուրայում հետևյալ մասնագիտությունների գծով՝

Մասնագիտություններ	Ուսման տևողությունը (տարի), առկա	Ուսման տևողությունը (տարի), հեռակա	Շրջանավարտներին տրվող որակավորումը	Վարձի չափը (հազար դրամ) 2011-2012 ուս. տարի (առկա)	Վարձի չափը (հազար դրամ) 2011-2012 ուս. տարի (հեռակա)
Փրկարարական գործ	2	-	Ճարտարագիտության	235	-
Ճգնաժամային կառավարում (մենեջմենթ)	-	2,5	Տնտեսագիտության	-	240 200*

Ծանոթություն. * Համակարգում աշխատողների համար

մասնագետի անկյուն

Մարդկանց անվտանգության ապահովումը հրդեհի ժամանակ

Պայքարը հրդեհ կոչվող արհավիրքի դեմ տարվում է դարեր շարունակ, սակայն այսօր դա ավելի դժվար է, քանի որ աշխարհն օրեցօր ավելի հրդեհավտանգ է դառնում: Հսկայական էներգետիկական հզորությունների օգտագործումը, ավելի բարձր կալորիականությամբ նյութերի ստեղծումը, բազմաֆունկցիոնալ, հրդեհապայթյունավտանգության տարբեր աստիճանի խոշոր արդյունաբերական ու գյուղատնտեսական համալիրների, բարձրահարկ շենքերի եւ մարդկանց զանգվածային ներկայությամբ բազմաբնույթ խոշոր օբյեկտների առկայությունն հրդեհի առաջացման պոտենցիալ վտանգ են պարունակում:

Զգալի փոփոխություններ են տեղի ունենում շենքերի կառուցվածքահատակագծային լուծումներում եւ տեխնոլոգիական պրոցեսներում, մեծանում է մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտների տարողունակությունը: Շինարարության մեջ լայնորեն կիրառվում են թեթեւ մետաղական եւ փայտե կառուցատարրեր, պոլիմերային ջերմապահպանիչներով բազմաշերտ պանելներ, դյուրավառ ջերմամեկուսիչ, ակուստիկ եւ հարդարման նյութեր: Այս ամենը մեծացնում է հրդեհի վտանգավոր գործոնների արագ ներազդեցության վտանգը, դժվարացնում է տարհանման գործընթացը, իսկ երբեմն էլ հանգեցնում է աղետալի հետեւանքների՝ զգալի մարդկային զոհերով եւ ահռելի նյութական կորուստներով:

Որպեսզի հայտնաբերվեն մարդկանց անվտանգության ապահովման թերությունները, առաջարկվեն գրագետ, արդյունավետ լուծումներ դրանց վերացման համար, անհրաժեշտ է կարողանալ վերլուծել մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ներգործության հավանականությունը, կանխատեսել մարդկանց պահվածքը հրդեհի ժամանակ եւ տարհանման տեւողությունը, որոշել հրդեհի հետեւանքներից մարդկանց պաշտպանության հիմնական ուղղությունները եւ իմանալ դրանց համար սահմանված հրդեհային անվտանգության կոնկրետ պահանջները:

Հրդեհի ժամանակ մարդկանց անվտանգության ապահովման վերահսկողությունը դժվարանում է նաեւ այն պատճառով, որ այն պետք է իրականացվի մշտապես՝ նախագծման, շինարարության եւ շահագործման փուլերում: Հրդեհային անվտանգության կանոնների պահանջներից նույնիսկ աննշան շեղումը կարող է բերել լուրջ հետեւանքների:

Տարհանման ուղիների եւ ելքերի նախագծման ժամանակ անհրաժեշտ է ձգտել, որ տարհանման գործընթացը տեղի ունենա մինչեւ մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ազդելը եւ հնարավորինս՝ առանց շարժման ընդհատումների:

Նախ որոշ պարզաբանումներ տանք հրդեհի վտանգավոր գործոնների վերաբերյալ, որոնք այս կամ այն կերպ ազդում են մարդկանց վրա: Այրման արգասիքների առկայությունն ունենում է որոշակի հոգեբանական ազդեցություն: Տաքության զգացողությունը, տեսանելիության կորուստը կամ հատկանշական հոտը զուգորդվում են վտանգի աղբյուրի առաջացման հետ, որի չափերն ու ներգործության ուղղությունն անհայտ են:

Հրդեհի վտանգավոր գործոնները նրանք են, որոնց ներգործությունը հանգեցնում է վնասվածքների, թունավորումների կամ զոհերի, ինչպես նաեւ նյութական կորուստների: Հրդեհի՝ մարդկանց վրա ազդող վտանգավոր գործոնները հետեւյալն են՝ բաց կրակը եւ կայծերը, շրջակա միջավայրի բարձր ջերմաստիճանը, այրման թունավոր արգասիքները, ծուխը, թթվածնի ցածր պարունակությունը, շենքերի, շինությունների եւ սարքավորումների փլեցումն ու վնասվելը, պայթյունը եւ այլն:

Բաց կրակը շատ վտանգավոր է, բայց մարդկանց վրա անմիջականորեն ազդելու դեպքերը քիչ են: Ավելի հաճախ վտանգ են ներկայացնում կրակի արձակած ճառագայթային հոսքերը: Առավել մեծ վտանգ է ներկայացնում տաքացած օդի ներշնչումը, ինչը բերում է վերին շնչառական ուղիների վնասվածքների եւ նեկրոզի, շնչահեղձության ու մահվան: Այսպես, օրինակ, 100 ºC-ից բարձր ջերմաստիճանի ազդեցության հետեւանքով մարդը կորցնում է գիտակցությունը եւ մահանում: Վտանգավոր են նաեւ մաշկի այրվածքները: Չնայած այրվածքների բուժման բնագավառում բժշկության մեծ ձեռքբերումներին, մարմնի 30 տոկոսի երկրորդ աստիճանի այրվածքներ ստացած մարդը շատ քիչ հնարավորություն ունի կենդանի մնալու: Իսկ երկրորդ աստիճանի այրվածքներ ստանալու ժամանակը մեծ չէ: Այն կազմում է 26 վրկ՝ շրջակա միջավայրի 71 ºC-ի, 15 վրկ՝ 100 ºC-ի եւ 7 վրկ՝ 176 ºC-ի դեպքում:

Ժամանակակից շենքերում, որտեղ լայնորեն կիրառվում են տարբեր տեսակի պոլիմերային եւ սինթետիկ նյութեր, հրդեհի ժամանակ մարդկանց վրա մեծ ազդեցություն են գործում այրման թունավոր արգասիքները: Չնայած այրվող նյութերում պարունակվում են թունավոր ազդեցություն ունեցող 50-100 տեսակի քիմիական միացություններ, տարբեր երկրների գիտնականների մեծամասնության կարծիքով հրդեհի ժամանակ մարդկանց զոհվելու հիմնական պատճառը ածխածնի օքսիդով թունավորվելն է:

Ածխածնի օքսիդը վտանգավոր է նրանով, որ 200-300 անգամ ավելի լավ է ռեակցիայի մեջ մտնում (փոխազդում) արյան հեմոգլոբինի հետ, քան թթվածինը, ինչի հետեւանքով արյան կարմիր մասնիկները կորցնում են օրգանիզմը թթվածնով մատակարարելու ունակությունը: Առաջանում է թթվածնային քաղց, հյուսվածքների հիպոքսիա (թթվածնաքաղց), մարդը կորցնում է մտածելու կարողությունը, դառնում է անտարբեր եւ անուշադիր, չի փորձում փրկվել վտանգից: Այնուհետեւ վրա է հասնում փայտացումը, դեպրեսիան, շարժման համակարգվածության խանգարումը, իսկ շնչառության կանգնելու դեպքում՝ մահը:

Ածխածնի օքսիդի վտանգավորությունը բացատրվում է ոչ միայն թունավորությամբ, այլ նաեւ այրման արգասիքներում դրա համեմատաբար մեծ պարունակությամբ: Հրդեհի ժամանակ ածխածնի օքսիդ գոյանում է 10-40 անգամ ավելի շատ, քան առավել թունավոր ցիանական ջրածին: 50-70 տոկոս դեպքերում մարդիկ զոհվում են ածխածնի օքսիդով թունավորվելու եւ թթվածնի անբավարարության պատճառով:

Հրդեհի պայմաններում, նյութերի այրման ժամանակ օդում թթվածնի պարունակությունը նվազում է: Թթվածնի պարունակության նվազումն ընդամենը 3 տոկոսով առաջացնում է մարդու օրգանիզմի շարժողական ֆունկցիաների վատացում, իսկ վտանգավոր է համարվում թթվածնի պարունակության 14 տոկոսը, որի ժամանակ կորչում է շարժման կոորդինացիան, վատանում է մտավոր կենտրոնացումը, դժվարանում է մարդկանց տարհանումը:

Սրանք հրդեհի այն հիմնական վտանգավոր գործոններն են, որոնք անմիջականորեն ներազդում են մարդկանց վրա: Պետք է հաշվի առնել նաեւ, որ վտանգը մեծանում է խուճապի եւ դրանով պայմանավորված գործընթացների, հրդեհը մարելու փորձեր ձեռնարկելու եւ վտանգավոր գոտում երկար մնալու, ինչպես նաեւ վարչակազմի եւ աշխատակիցների սխալ գործողությունների պատճառով:

Շարունակելի

Սերգեյ Հայրապետյան
ՀՀ ԱԻՆ ՊՀՏ ՀՀՎՀՔ
բաժնի պետ

Հանդիպում ազգային գրադարանում

Ալ. Մյասնիկյանի անվան ազգային գրադարանում հերթական անգամ ինքնատիպ ցերեկույթ էր:

Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձի նախօրեին, մայիսի 27-ին ազգային գրադարանը մեծարման ու գնահատանքի էր հրավիրել ՀՀ զինված ուժերի կազմավորման հիմնադիրներից մեկին՝ գեներալ-մայոր Աշոտ Սեդրակի Պետրոսյանին:

1956 թ. մայիսի 1-ին Տաշիրի շրջանի Մեծավան (Շահնազար) գյուղում ծնված գեներալը դարձավ 55 տարեկան: Աշոտ Պետրոսյանը կադրային զինվորական է: 1974 թվականից զինված ուժերում է:

1979 թ.-ին ավարտել է Նովոսիբիրսկի բարձրագույն ռազմաքաղաքական ուսումնարանը, 1989 թ.-ին՝ Մոսկվայի Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիան: Խորհրդային զորքերի կազմում ծառայել է Հունգարիայում, հեռավոր Ալթայի երկրամասում:

1991 թ.-ին Ա. Պետրոսյանը նշանակվել եւ մինչեւ 1992 թ. եղել է ՆԳՆ հատուկ գնդի հրամանատարը, որը ՀՀ զինված ուժերի ստեղծման հիմնաքարը դարձավ:

1992 թ.-ից՝ ՀՀ պաշտպանության նախարարության կազմավորումից ի վեր, ծառայել է հայկական բանակում որպես դեսանտագրոհային գնդի, այնուհետեւ՝ բրիգադի, բանակային կորպուսի հրամանատար, ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ:

ՀՀ ԶՈՒ առաջին դեսանտագրոհային գունդը Ա.Պետրոսյանի հրամանատարությամբ մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության համար մղվող մարտերին, Արցախի ինքնապաշտպանությանը: 1993 թվականին գնդապետ Ա. Պետրոսյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ բանակի թիկունքի պետ:

1995 թվականին՝ ՀՀ նախագահի հրամանագրով, Ա. Պետրոսյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում: 1997 թվականից մինչեւ բանակից զորացրվելը՝ 1999-ը, եղել է ՊՆ ռազմական ուսումնարանի պետը:

Ազգային գրադարանը գեներալ Ա. Պետրոսյանին նվիրված ցերեկույթին նախապատրաստվել էր զինվորական տրամադրությամբ: Դահլիճի նախասրահը ձեւավորված էր հայկական բանակի առաջին կազմավորումների մասին պատմող լուսանկարներով: Ցերեկույթին հրավիրված էին մարտական ընկերներ՝ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի գլխավորությամբ, պետական, հասարակական, քաղաքական գործիչներ, մտավորականներ:

Գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը, որը խորհրդային բանակում եղել է հոբելյարի հրամանատարը, հիշեց ու պատմեց Ա. Պետրոսյանի անցած ուղին՝ առաջին զինվորական քայլերից մինչեւ արցախյան ազատագրական պայքարի մարտերում թրծվելը:

Մեր ժողովրդի կյանքում արցախյան ազգային-ազատագրական պատերազմի դերի ու նշանակության, կադրային զինվորականների, կամավորականների մարտական դերակատարումների մասին մասնագիտական գնահատականներով հանդես եկան գրող Սասուն Գրիգորյանը, պատմական գիտությունների դոկտոր Վլադիմիր Պետրոսյանը, ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, մարտական ընկերները:

Հանդիսության մասնակիցներին խոր հուզմունք պատճառեց ՀՀ ԶՈՒ առաջին ռազմական միավորման, առաջին դեսանտագրոհային գնդի մարտիկների երդման մասին պատմող ֆիլմը, զինվորներ, որոնցից 18-ն ընկան վեցամսյա մարտերում, զինվորներ, որոնք այսօր արդեն քառասուն տարեկան են:

Հայկական բանակի կազմավորման մասին հիշողություններում հնչեցրին նաեւ բանակի առաջին շինարար-հրամանատարների անունները՝ Վազգեն Սարգսյան, Սերժ Սարգսյան, Նորատ Տեր-Գրիգորյանց, Հրաչ Անդրեասյան, Քրիստափոր Իվանյան, Գուրգեն Դալիբալթայան, Միքայել Հարությունյան, Արտյուշա Հարությունյան եւ մեծարանքի արժանի բազմաթիվ ուրիշ անուններ: Այդ շարքի ինքնատիպ անուններից մեկն էլ հոբելյարն էր՝ գեներալ Ա. Պետրոսյանը:

Մեր ժողովուրդը պատերազմ չի սիրել, բայց պատերազմել միշտ էլ կարողացել է, վերջին վկան՝ արցախյան գոյամարտը:

Մեզ մնում է հարգել մեր հաղթանակը, պաշտպանել մեր հաղթանակների պտուղները, պաշտպանել ու գնահատել մեր հերոսներին:

Մարտական ընկերներից՝
Ա. Հակոբյան

Սպիտակի երկրաշարժ

Աղետի վկան

Սպիտակի երկրաշարժից արդեն ավելի քան 20 տարի է անցել, բայց այդ ավերիչ աղետի մասին հիշողությունները դեռ չեն խամրել: Ոմանց համար դրանք անվերջ մղձավանջների պատճառ են, ոմանց համար էլ նոր որոնումների ու ձեռքբերումների խթան: Սպիտակի վկաների հիշողությունվկայությունները կօգնեն չմոռանալ աղետի դասերը:

Սուսաննա Աստոյան
Գյումրիի գուլպանասկեղենի արտադրամասի գլխավոր ինժեներ

1988 թվականին մեր ընկերությունը Խորհրդային միության գուլպա արտադրող ամենահզոր ձեռնարկություններից մեկն էր: Այդ ժամանակ այստեղ 6000 մարդ էր աշխատում: Տարեկան արտադրվում էր 104 մլն զույգ գուլպեղեն, որն առաքվում էր 106 հասցեներով:

1988 թվականի դեկտեմբերի 7-ը երբեք չեմ մոռանա: Այդ օրերին երկիրը քաղաքական ու տնտեսական ցնցումների մեջ էր: Ամեն տեղ գործադուլներ էին: Երկրաշարժի օրը մենք աշխատում էինք: Հիշում եմ՝ գործադուլավորները հավաքվել էին մեր ֆաբրիկայի պատուհանների տակ ու ասում էին՝ ինչու՞ եք աշխատում, մի՛ աշխատեք, թե չէ գործարանը կպայթեցնենք: Երբ եղավ երկրաշարժի առաջին ցնցումը, բոլորը մտածեցին, թե մեզ իսկապես պայթեցնում են: Բայց հետո հաջորդեցին երկրորդ, երրորդ ցնցումներն, ու հասկացանք, որ բնական աղետ է: Ես այդ պահին մեր առաջին մասնաշենքում էի, աշխատողների հետ զրույցներ էի տանում, համոզում էի, որ գործադուլ չանեն, աշխատեն ու հետո նոր պահանջեն ինչ-որ բան: Այդպես զրուցելով իջնում էինք ներքեւ, երբ շենքը սկսեց ցնցվել: Հասցրեցի դուրս վազել: Աչքիս առաջ փլվեցին մեր ֆաբրիկայի բոլոր շենքերը, շատ ծանր հետեւանքներ եղան: Հիմա որ հետադարձ հայացք եմ գցում, մտածում եմ՝ մենք ինչպե՞ս ենք դիմացել այդ տեսարաններին. Մեր գործընկերների հետ 5 րոպե առաջ աշխատում էինք, իսկ 5 րոպե հետո մեկի գլուխը պոկված-ընկած էր բակում, մյուսը ճզմված էր հաստոցների արանքում: Փոշին ծածկել էր ամբողջ տարածքը: Մի բան է շատ տպավորվել. բոլորը, ովքեր հասցնում էին դուրս վազել, ասում էին՝ երեխեքս, երեխեքս: Միայն մի մարդ էր, որ բղավում էր՝ ծառերը բռնեք: Բայց ի՞նչ ծառ: Ոչ մեկն այդ պահին նույնիսկ իր մասին չէր մտածում: Միայն երեխաների համար էին անհանգստանում. որը մանկապարտեզում էր, որը՝ դպրոցում, ինստիտուտում: Բոլորի ճակատագրերը միանգամից փոխվեցին: Մեզ համար երկու ժամանակ կա՝ երկրաշարժից առաջ ու երկրաշարժից հետո: Այդ աղետն ամեն ինչ փոխեց եւ՛ մարդկային ճակատագրերում, եւ՛ ընտանիքներում, եւ՛ աշխատանքային կոլեկտիվներում: Ամեն տեղ էին այդ ավերածությունները, զոհերը, հաշմանդամները: Դիակներն այստեղ՝ գործարանի բակում շարել էին, որ հարազատները գան, գտնեն: Առաջին փրկարարները մեր աշխատակիցներն էին: Տեխնիկա չկար: Հիմա շատ ուրախ եմ, որ

փրկարարական ծառայություն կա, սեյսմիկ ծառայություն կա: Մարդիկ գոնե հույս ունեն, որ եթե մի բան տեղի ունենա, օգնության հասնող կլինի: Իսկ այն ժամանակ մարդիկ իրենց վշտի հետ լրիվ մենակ մնացին: 3-4-րդ օրը նոր ուրիշներն եկան, սկսեցին օգնել:

Եւ աշխատատեղս էր փլվել, եւ բնակարանս, բայց ընտանիքից զոհ չունեի: Շատ մոտ մարդկանց ու հարազատների կորցրեցի, իհարկե, բայց ընտանիքից ոչ ոք չմահացավ: Դրա համար ես անմիջապես եկա ֆաբրիկա ու սկսեցի զբաղվել մեր ընկերների ընտանիքներով: Օգնում էի, որ գտնեն իրենց հարազատներին: Հիշում եմ՝ ողջերի ու զոհվածների մի մեծ ցուցակ կազմեցինք: Գյումրիում ամենաշատ զոհը մեր ֆաբրիկան տվեց՝ մոտ 400 մարդ: 369 երեխա դարձավ երկկողմանի ու միակողմանի ծնողազուրկ: Մեր գործարանի տնօրինությունը կազմակերպեց, որ այդ երեխաները մինչեւ չափահաս դառնալն օգնություն ստանան: Մենք բոլորս շատ էինք մտերմացել նրանց հետ: Մինչ օրս էլ կապ ենք պահպանում:

Երկրաշարժից առաջ մեր ֆաբրիկայում բոլոր ծանր հաստոցները դրված էին 3-րդ հարկում: Մոսկվայի, Կիեւի գիտահետազոտական ինստիտուտներից էին եկել ու այդպես էին նախագծել, տեղադրել: Բայց երկրաշարժի ժամանակ պարզ դարձավ՝ դա շատ սխալ հաշվարկ էր, երեւի ոչ մեկի մտքով չէր անցել, որ նման ուժի երկրաշարժ կարող է լինել: Մասնաշենքերն այդ պատճառով հենց առաջին ցնցմանը չդիմացան: Շատ մարդիկ մնացին հաստոցների տակ:

Մենք երկրաշարժից դասեր քաղեցինք: Հիմա գործարանն աշխատում է կանգուն մնացած մասնաշենքում: Շինությունն ամեն կերպ ամրացվել է: Սեյսմիկ ծառայությունից են մասնագետներ եկել, նայել են, իրենց հաշվարկներն են արել: Ոչ միայն պատերն են հենասյուներով ամրացվել, այլեւ՝ հիմքը: Այսօր մենք հանգիստ ենք աշխատում, որովհետեւ գիտենք՝ շենքն ապահով է: Ծանր հաստոցներն էլ միայն առաջին հարկերում են:

1988 թվականի երկրաշարժից հետո մեր քաղաքի կյանքն ասես կանգ առավ: Ոչ մի ձեռնարկություն չէր աշխատում: Բայց մեր ֆաբրիկան ամեն ջանք գործադրեց, որ նորից աշխատի: 1989 թվականի փետրվարին արդեն մենք արտադրանք տվեցինք: Դրանով ուզում էինք մարդկանց հուսադրել, որ Լենինականը դեռ ապրում է, կյանքն էլ՝ շարունակվում:

Անի Ստեփանյան

հոգեբանի սենյակ

Ψ Հաղորդակցման գիտակ

Ինչպե՞ս դառնալ հաղորդակցման գիտակ: Այստեղ մեզ օգնության է գալիս նյարդալեզվաբանական ծրագրավորման տեխնիկան, որը հիմնադրվել է 1970 թվականին: Այս մեթոդի հմնադիրներից են Ջոն Գրինդերը եւ նրա կոլեգա Կարմեն Բոստինը: Վերջինս էլ ավելի է կատարելագործել հաղորդակցման այս տեխնիկան: Նյարդալեզվաբանական մեթոդը կիրառական հոգեբանության ուղղություններից մեկն է, որը հիմնված է խոսքի միջոցով անհրաժեշտ միտքն ամրապնդելու սկզբունքի վրա: Նյարդալեզվաբանական տեխնիկան հնարավորություն է տալիս մարդուն ապակոդավորել դիմացինի խոսքը եւ ավելի արդյունավետ ու հասանելի փոխանցել սեփականը:

Ինչու՞ հաճախ դժվար է լինում հասկանալ միմյանց:

Ջոն Գրինդեր. Մենք հակված ենք մտածելու, որ հաղորդակցումը միայն խոսք է եւ մոռանում ենք ոչ խոսքային, այսինքն՝ ոչ վերբալ հաղորդակցման մասին: Իրականում ոչ խոսքային հաղորդակցումը՝ ժեստերը, միմիկան, պանտոմիմիկան, ավելի շատ են ազդում հարաբերությունների վրա, քան խոսքը: Հետեւելով գլխի եւ պարանոցի, աչքերի շարժումներին, ձայնին՝ դուք ավելի լավ կհասկանաք եւ կլսեք ձեր զրուցակցին, քան միայն ընկալելով նրա խոսքը: Օրինակ՝ երբ ձեզ ասում են «Դուք գեղեցիկ եք» եւ միեւնույն ժամանակ բացասական շարժում են գլուխը, դուք կխառնվեք իրար, քանի որ ձեզ միաժամանակ ուղարկում են 2 տարբեր եւ իրար հակասող ազդակներ:

Ինչպե՞ս ադեկվատ լինել հաղորդակցության ժամանակ:

Ջոն Գրինդեր. Կան մի քանի փուլեր, որոնց մասին մենք կխոսենք:

Առաջին փուլ: Դուք պետք է հստակ գիտակցեք, թե ինչ եք ուզում ասել, ինչ եք սպասում այս զրույցից: Յուրաքանչյուր զրույց որոշակի նպատակ է հետապնդում, օրինակ՝ խորհուրդ ստանալ, պայմանագիր կնքել, կամ ավելի խոր նպատակ՝ շարունակել ընկերական հարբերությունները: Երբ արդեն ձեզ համար պարզ է ձեր զրույցի նպատակը, ապա հաջորդ քայլն ավելի կանոնակարգված կլինի:

Երկրորդ փուլ: Եղեք ուշադիր դիմացինի նկատմամբ, նրա խոսքերի եւ հատկապես մարմնի շարժումների նկատմամբ: Երբ ձեզ ասում են, որ ուզում են ձեզ հետ խոսել եւ այդ ժամանակ ձեր հայացքը սահում է վերեւ եւ ձախ, ապա դա վկայում է այն մասին, որ տվյալ պահին դուք անգիտակցականորեն տեսողական ինֆորմացիայի կարիք էլ ունեք դիմացինի

խոսքն ավելի արդյունավետ ընկալելու համար: Որպեսզի ինֆորմացիայի փոխանցումը լինի ավելի արդյունավետ, լավ կլինի, որ դիմացինն իր խոսքի մեջ կիրառի պատկերների եւ տեսողության զգայարանին հատուկ խոսքեր: Օրինակ՝ «Տեսնու՞մ ես՝ ինչ ստացվեց», «Տեսնենք՝ ինչպե՞ս կդասավորվի իրավիճակը» եւ այլն:

Հաղորդակցումը մանիպուլյացիա՞ է:

Ջոն Գրինդեր. Հաղորդակցման մեջ միշտ առկա է մանիպուլյացիան: Կախված այն հանգամանքից, թե մանիպուլյացիան ինչ նպատակով է կիրառվում՝ նյարդալեզվաբանական ծրագրավորումը հնարավորություն է տալիս մարդուն ընտրել հաղորդակցման այն տարբերակը, որը կօգնի լսել ուրիշին եւ արտահայտվել: Այդ մեթոդը հնարավորություն է տալիս ցույց տալ դիմացինին, որ ընդունում ես նրա «մտքի կերպարները»:

Այսինքն՝ պետք է միշտ գիտակցե՞լ, թե ինչպե՞ս եւ ինչի՞ համար ենք մենք ընտրում բառերը, հետեւել մարմնի շարժումներին եւ ձայնի՞ն:

Ջոն Գրինդեր. Իհարկե, հնարավոր չէ անբողջովին վերահսկել մեր անձը: Այն մարդիկ, ովքեր չափազանց անհանգստացած են այդ հարցով, հաղորդակցման ժամանակի մեծ մասը տրամադրում են սեփական անձի վրա կենտրոնանալուն, քան դիմացինին լսելուն ու հասկանալուն: Այդ պատճառով նրանք հաճախ են ունենում հաղորդակցման խնդիրներ: Նրանք ավելի շատ կենտրոնացած են, որ հանկարծ չսխալվեն եւ մոռանում են զրուցակցին: Հաղորդակցումը պետք է լինի փոխադարձ ընկալման եւ հասկացման մի գործունեություն, իսկ նյարդալեզվաբանական մեթոդն էլ պետք է օգնի ավելի արդյունավետ դարձնել հաղորդակցումը:

Ընդհանուր գիտելիքներ հաղորդակցման համար

Փորձեք խոսելիս ուշադրություն դարձնել, թե ո՛ր խոսքը եւ արտահայտությունն եք հաճախակի օգտագործում, քանի որ հաճախակի կիրառվող բառերը մեծ ազդեցություն են թողնում զրուցակցի վրա: Կան բառեր, որոնք ավելի ազդեցիկ են եւ նպատակին հասնելու համար ավելի նպատակահարմար: Պարզապես պետք է դուք ինքներդ գտնեք ձեր անհատական բառարանը, որը կօգտագործեք ձեր խոսքը դիմացինին ավելի հասանելի դարձնելու համար:

Եթե ձեր զրուցակիցը խոսելիս հայացքն ուղղում է վերեւ, ապա դա վկայում է, որ նա ավելի շատ հակված է պատկերավոր կերպարների ընկալմանը, եթե հորիզոնական է հայացքը պահում, ապա ավելի շատ հակված է լսողական, ձայնային կերպարների: Երբ հայացքը ներքեւ է ուղղվում, ապա դա աջակցության, օգնության կոչ է՝ զգացմունքների տեսակետից: Եթե հայացքն ուղղվում է ձախ, ապա դա վկայում է, որ մարդու տվյալ պահի հույզերը կապված են հիշողությունների հետ, եթե աջ, ապա դրանք հիմնված չեն փորձի վրա եւ ավելի շատ երեւակայական են:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Մի ուտոպիայի պատմություն

Ստյուարտ Բրանդ. փիլիսոփա եւ գործնական մարդ

«Մի անգամ 1966 թվականի փետրվարին, երբ ես 28 տարեկան էի, հայտնվեցի մի շենքի մանրախիճ փռած տանիքին՝ Սան Ֆրանցիսկոյի հյուսիս-արեւելքում: Թմրադեղի չնչին չափաբաժինը գեղեցկացրել էր բավական տաղտկալի օրը, եւ, վերմակով փաթաթված, ես նստել ու աչքերս պլշել էի հորիզոնին: Դիտելով երկնաքերները, ես հանկարծ հասկացա, որ նրանք վեր են խոյանում ոչ թե զուգահեռաբար, այլ գագաթներին մոտ փոքր-ինչ շեղվում են: Շուտով ես եկա լիովին հասկանալի եզրակացության, որ ամբողջ պատճառը երկրի ուռուցիկությունն է, ինչը տեսանելի է դառնում այնքան, որքան դու բարձրանում ես... Ես պատկերացրեցի, թե ինչքան հզոր պատկեր կբացվեր բաց տիեզերքից մեր մոլորակին նայելիս. մարդիկ իրենց այնպես են պահում, կարծես երկիրը տափակ է ու անսահման, թեեւ իրականում այն գնդի ձեւ ունի, եւ գունդն այդ խիստ «սահմանափակ է» տարածության մեջ. մինչեւ մարդիկ չգիտակցեն մեր աշխարհի սահմանափակությունն ու փխրունությունը եւ չսովորեն խնամքով վերաբերվել նրան, մեր քաղաքակրթությունը չի կարող ճիշտ զարգանալ: Հավաքելով ցաքուցրիվ մտքերս՝ ես վերջապես հասկացա, թե ինչ է ինձ հարկավոր. գունավոր լուսանկար: Մարդիկ երկիրը կտեսնեն ամբողջությամբ՝ փոքրիկ, դատարկության մեջ ճախրող, եւ արդեն չեն կարող աշխարհին նայել հին հայացքով»:

Կենսաբան եւ դիզայներ Ստյուարտ Բրանդը հավանաբար միակ երիտասարդը չէր, որն օրը ցերեկով նստել էր տանիքին ու մտածում էր աշխարհի ճակատագրի մասին, սակայն, ի տարբերություն մյուսների, նա կարողացել է գրառել իր մտքերը: Եւ նրա այդ մտավոր փորձն իսկապես գուցե թե ավելի մեծ նշանակություն է ունեցել մարդկության զարգացման համար, քան այլ փորձեր թմրադեղերի ոլորտում, որոնց նա մասնակցել է. Քեն Քիզիի հանրահայտ «Թթվային թեսթերը» եւ լրիվ օրինական՝ գիտակցությունն ուսումնասիրող գիտափորձերը Ստենֆորդի գիտահետազոտական ինստիտուտում: Մեր աշխարհի ամբողջականության ու սահմանափակվածության գաղափարը չէր լքում նրան, եւ հենց նույն՝ 1966 թվականին նա սկսեց թողարկել նշաններ հետեւյալ մակագրությամբ. «Ինչու՞ դուք մինչեւ այժմ չեք տեսել Երկիրն ամբողջությամբ»: Արդեն իսկ մեկ տարի հետո նրա արշավը հաջողությամբ պսակվեց. ԱՄՆ ՌՕՆ Dodge արբանյակն ամբողջ Մոլորակի առաջին լուսանկարն արեց: Հիմա, երբ Google Earth-ի շնորհիվ կարելի է ոչ միայն տեսնել Երկիրն ամբողջությամբ, այլեւ պտտել այն տարբեր ուղղություններով, այնուհետեւ մեկ ակնթարթում մոտեցնել քո քաղաքը, փողոցը, տունը, բակը եւ տատիկներին, որոնք նստած են այնտեղ դրված նստարանին, բավական դժվար է պատկերացնել, թե ինչպիսի մեծ ցնցում էր մարդկության համար մեր մոլորակի լուսանկարչական պատկերումը: Ինչ-որ բան իսկապես փոխվել է մարդկանց գիտակցության մեջ: Եւս երկու տարի անց ԱՄՆ-ում անցկացվեց առաջին՝ Երկրի Օրը, որն այնպիսի զրնգուն ու հաջողված իրադարձություն եղավ, որ 1971 թվականից, ՄԱԿ-ի հանձնարարականով, այն սկսեցին նշել ամբողջ աշխարհում: Սկսվեց լայնամասշտաբ էկոլոգիական շարժումը:

Նույն այդ ժամանակ Ստյուարտ Բրանդի գաղափարը վաղուց արդեն բյուրեղացել ու դարձել էր մոլորակը խնամքով օգտագործելու որոշակիորեն գործնական մի ձեռնարկ: 1968 թվականի վերջին հրատարակվեց «Ամբողջ Երկրի կատալոգի» առաջին համարը, որի կազմին ամերիկյան արբանյակի արած լուսանկարն էր. մեր աշխարհը՝ տիեզերքից: Հանդեսի առաջաբանում գրված էր. «Մենք նման ենք աստվածներին, ուրեմն՝ եկեք սովորենք օգտվել դրանից... Նախազգուշացում. այս կատալոգի տեղեկատվական ապարատի օգտագործումը ձեզ խելազուրկ է անելու»: Սակայն, ձեւի ամբողջ ծայրահեղականությամբ հանդերձ, որը փորձարկում էին Բրանդն ու իր գործընկերները - այնպիսիք, ինչպիսին ինքն էր, կենսաբաններ, դիզայներներ ու բիթնիկներ - կատալոգի բովանդակությունը լիովին սթափ ու գործնական էր. գրքերի լուսաբանումներ, տեղեկություններ էկո-տների, գեներատորների եւ ջերմոցների (գրախոսություն, գներ, հասցեներ) վերաբերյալ, խորհուրդներ հողագործներին ու անասնապահներին, կենսաբանության հիմունքների, ինժեներական գործի, հոգեբանության ու կենսագործունեության անվտանգության մեկնություններ:

Հրատարակությունը հասցեագրված էր գլխավորապես տասնյակ միլիոնավոր ամերիկացիների, որոնք 1960-ականների վերջերին ինքնավար կյանքի էին ձգտում կոմունաներում՝ համայնքներում: Բրանդի «Ամբողջ Երկրի կատալոգը», որն ուներ «Ազատ մուտք դեպի գործիքներ» (աշխարհի ճանաչումը եւ փոփոխումը) ենթավերնագիրը, բացատրում էր նրանց, թե հատկապես ինչ կերպ պիտի կառուցվի ուտոպիան (երազանքը):

Կատալոգը հրատարակվեց ընդամենը 3 ու կես տարի (ճիշտ է, հետագայում թողարկվել են բազմաթիվ շարունակություններ՝ «Ամբողջ Երկրի վերջաբանը», Ամբողջ Երկրի վերջին կատալոգը» տիպի), փոխարենը՝ միլիոնավոր տպաքանակներով եւ այդ ընթացքում ոչ միայն նվաճեց ԱՄՆ-ի Ազգային գրքային մրցանակը, այլեւ հասցրեց դառնալ «սերնդի աստվածաշունչը»՝ Apple-ի հիմնադիր Սթիվ Ջոբսի արտահայտությամբ: «Մուտք դեպի գործիքներ» ցուցահանդեսը նյույորքյան ժամանակակից արվեստի թանգարանում, որը բացվել է այս տարվա գարնան վերջին եւ կազմված է «Ամբողջ Երկրի կատալոգի» արխիվներից եւ ուղեկցող գրականությունից, իհարկե, Բրանդի վաստակի գնահատումն է, մարդու, որն «Ամերիկայի ամենաքիչ հայտնի եւ ամենաազդեցիկ մտածողն» է, ինճպես նրան բնորոշել է The Los Angeles Times Magazine հանդեսը: Բայց այդ վաստակն առաջին հերթին տարածելի է զանգվածային մշակույթի եւ արվեստի հանդեպ:



(իզուր չէ, որ Բրանդը սովորել է ոչ միայն Ստենֆորդի կենսաբանության ֆակուլտետում, այլեւ Սան Ֆրանցիսկոյի Արվեստի ինստիտուտում), եւ ոչ գաղափարների ոլորտում:

«Ամբողջ Երկրի կատալոգի» առաջին թողարկումների ժամանակներից Բրանդի միտքը շատ առաջ գնաց: Օգտագործելով այդպիսի հաջողությամբ գտնված «ամբողջ Երկրի» բրենդը, նա շարունակեց կառուցել իր երազանքը, որի սահմանները, սակայն, անընդհատ ընդլայնվում էին: 1980 թվականին Ստյուարտ Բրանդն էկոլոգիական համայնքներից տեղափոխվեց դեպի վիրտուալ տարածության մեջ գոյող անարխիստական կառույցներ եւ հիմնադրեց այսօրվա դրությամբ ամենահին ցանցային միություններից մեկը՝ WELL-ը (Whole Earth 'Lectronic Link - «Ամբողջ Երկրի Լեկտորային կապ»): 1985 թվականի մայիսին հաքերների առաջին կոնֆերանսի ժամանակ նա հայտարարեց. «Տեղեկատվությունն ուզում է ազատ լինել», - եւ այդ հաստատման արդարացիությունը տարեցտարի ավելի ու ավելի ակնառու է դառնում: Նրա հաջորդ ծրագիրը դարձավ ֆուտուրոլոգ Պիտեր Շվարցի հետ հիմնած Global Business Network (GBN) կազմակերպությունը, որը մեծ բիզնեսին ու կառավարություններին պատասխանատու եւ երկարաժամկետ պլանավորում է սովորեցնում: Չնայած այդ խնդիրն ուտոպիստական է թվում ամբողջության մեջ, սակայն GBN-ն բավական հաջող գոյություն է պահպանում ահա արդեն քառորդ դար եւ սպասարկում է հարյուրավոր կորպորատիվ հաճախորդների ամբողջ աշխարհից:

1990-ականների կեսերին Ստյուարտ Բրանդն ստեղծեց Long Now բարեգործական հիմնադրամը, որը «հետազոտում է այն ամենն, ինչ կարող է թեկուզ փոքր-ինչ օգտակար լինել մտածելուն եւ պատասխանատու գործողություններ ծավալելուն ժամանակի տեւական ընթացքների մեջ»: Բրանդն ընդլայնեց իր երազանքի ժամանակային սահմանները եւ տեղավորեց այն նույնիսկ ոչ թե հազարամյակի, այլ տասնյակ հազարավոր տարիների համատեքստում. հիմնադրամի շրջանակներում ընդունված է տարիները գրառել ոչ թե քառանիշ, այլ հնգանիշ թվերով (օրինակ՝ 02011), իսկ նրա գաղափարի հանրագումարը դարձավ «10 000 տարվա ժամացույցը», բարձր ճշգրտությամբ աշխատող մեխանիկական հաշվիչ մեքենան: «Ինչպե՞ս անել, որ երկարաժամկետ մտածողությունը դառնա ինչ-որ ավտոմատ ու ինքնին հասկանալի, բնական եւ ոչ բարդ ու եզակի մի բան: Ինչպե՞ս անել, որ երկարաժամկետ պատասխանատվությունը դառնա ամենուրեք գոյություն ունեցող մի երեւույթ, - գրել է Բրանդն իր գրքում, որ ուներ հետեւյալ խորագիրը. «Երկարատեւ այժմ»-ի ժամացույցը. ժամանակ եւ պատասխանատվություն»: Եւ դարձյալ գտավ վառ ու մատչելի պատկեր. «Մեզ հարկավոր են ժամացույցներ՝ շատ մեծ եւ շատ դանդաղ աշխատող»: Ժամացույցների հետ մեկտեղ հիմնադրամում գործում է «Ռոզետա» ծրագիրը», որն ինտերնետում եղած լինգվիստական ամենամեծ տեղեկատվական բազաներից է, ինչպես նաեւ բարեգործական բուքմեյքերական Long Bets գործակալությունը:

Ստյուարտ Բրանդի էվոլյուցիայի տրամաբանական արդյունքը դարձավ «Ամբողջ Երկրի կարգուկանոնը» գիրքը, որը լույս տեսավ «Ամբողջ Երկրի կատալոգի» առաջին համարից 40 տարի անց եւ նվիրված էր արդիականության 4 էկոլոգիական միֆերի պսակազերծմանը: Բրանդը պաշտպանում է ուրբանիզացիան, գենային եւ գեո-ինժեներիան, բայց գլխավորը՝ ատոմային էներգետիկան, որն օպտիմալ է գների, արտադրողականության, մաքրության ու անվտանգության առումներով, եւ առանց որի աշխարհը ոչ մի կերպ չի կարող հաղթահարել բոլոր էկոլոգիական հիմնախնդիրները: Շրջակա միջավայրի պաշտպանները, մեղմ ասած, սառնությամբ ընդունեցին «Ամբողջ Երկրի կարգուկանոնը» գիրքը. Greenpeace-ի բարձրաստիճան աշխատակիցներն այն անվանեցին «անմտություն», իսկ հայտնի բրիտանացի հրապարակախոս Ջորջ Մոնբիոն պարզապես մեղադրեց հեղինակին կեղծարարության մեջ: Լինելով էկոլոգիական շարժման գլխավոր ջատագովներից մեկը, Բրանդը վերածվեց դրա գլխավոր հակառակորդներից մեկին: Բայց բանն այստեղ այն չէ, որ Քեն Քիզիի նախկին գաղափարակիցը լիովին բնականոն կերպով պոկվեց իր «լուսանցքային» արմատներից, դարձավ միջազգային կորպորացիաների խորհրդատու եւ ինտելեկտուալ «իստաբլիշմենթի» մաս: Իր ամբողջ ուտոպիստական անարխիզմով հանդերձ, Բրանդը միշտ առաջնորդվել է պրագմատիկ գաղափարներով ու առողջ բանականությամբ, անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է տեղային ինքնավար համայնքի ստեղծմանը, թե՞ մեր մոլորակին անհրաժեշտ գլոբալ ենթակառուցվածքային վերափոխումներին: Բրանդը միջուկային էներգետիկայի եռանդուն պաշտպաններից է մնում նույնիսկ Ֆուկուշիմայի ԱԷԿ-ի վթարից հետո, ու թեեւ շատուշատ էկոլոգներ դարձյալ ու դարձյալ քննադատում են նրան այդ հարցում, միեւնույն է, հեռանկարում, որն ընդգրկում է ժամանակի երկար մի հատված, նա, հավանաբար, ճիշտ է լինելու:

Դմիտրի Գոլուբովսկին
CITIZEN *K*

արտակարգ ժամանց

Հետաքրքիր փաստեր անձրեւի մասին

Պորտուգալիայում անձրեւի առատ տեղումները համարվում են աշխատանքից բացակայելու հարգելի պատճառ:

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում բնակիչները ժամանակը կարող են նաեւ անձրեւներով հաշվել, քանի որ այնտեղ

ամեն օր նույն ժամին է անձրեւ գալիս:

Յայտնի դարթս խաղը ստեղծվել է անձրեւի պատճառով: Մի անգամ անձրեւը խափանում է նետաձիգների մրցումները: Նրանք ուղեւորվում են մոտակա գարեջրատուն ու սկսում ծայրերը կտրած նետերով «կրակել» պատին ամրացված թիրախի վրա:

Իրականում անձրեւը չի բուրում: Այն հոտը, որ մարդիկ վերագրում են անձրեւին, արտազատում են ակտինոն եւ ցիանոբակտերիաները: Անձրեւը հոտավետ դարձնող նյութը կոչվում է գեոսմին:

Ուգանդայի բնակիչներին ամպրոպի գոռգոռոցը բոլորովին չի վախեցնում, որովհետեւ այդ երկրում ամպրոպ ու անձրեւ է լինում տարին 250 անգամ:

Անձրեւը նաեւ պատճառ է դարձել, որ ռադիոյով եղանակի կանխատեսման մասին թողարկումներ պատրաստվեն: Երբ ամերիկյան մի ռադիոկայանի սեփականատեր հայտնվում է անձրեւի տակ, նա որոշում է, որ այսուհետ եղանակի տեսության թողարկման ընթացքում օրվա մեջ մի քանի անգամ պետք է հաղորդեն հնարավոր անձրեւի մասին:

Բոթսվանայում, որտեղի կլիման շատ չորային է, մարդիկ միմյանց ողջունում են «պուլա» բառով, որը թարգմանաբար նշանակում է «անձրեւ»: Այս երկրի ազգային դրամը նույնպես այդպես է կոչվում:

Կուբայում անձրեւ է գալիս միայն սիեստայի՝ հետճաշյա հանգստի ժամանակ, Թաիլանդում՝ միայն գիշերը:

17-րդ դարում Մեծ Բրիտանիայում անձրեւի մասին մի օրենք է ընդունվում, որի համաձայն՝ անձրեւի սխալ կանխատեսման համար օդերեւութաբանին մահապատժի էին ենթարկում:

Անապատում անձրեւի տակ հայտնվելու դեպքում մարդը կարող է միանգամայն չոր մնալ: Իրականում անապատում նույնպես կարող է անձրեւ գալ, սակայն այդ մասին շատ դժվար է իմանալ, քանի որ օդի չափազանց բարձր ջերմաստիճանի պայմաններում անձրեւի կաթիլները բառացիորեն գոլորշանում են օդում՝ չհասցնելով իջնել գետնին:

Անձրեւի վերաբերյալ օդերեւութաբանական կենտրոնների բոլոր արտահայտությունները որոշակի իմաստ ունեն: Օրինակ՝ «կարճատեւ անձրեւ» արտահայտությունը նշանակում է, որ սպասվող անձրեւը 3 ժամից ավելի չի տեւի, «սպասվում է անձրեւ» նշանակում է՝ հնարավոր անձրեւը կես օրից (12 ժամ) ավելի չի տեւի, իսկ «առանց էական տեղումների» արտահայտությունը բոլորովին էլ չի նշանակում, որ անձրեւ չի գալու: Պարզապես 1 քմ մակերեսի վրա 0,3 լիտրից ավելի չի գալու:

Յնդկաստանում գտնվող Չերափունջի քաղաքը համարվում է աշխարհի ամենաանձրեւային վայրը: Տարվա ընթացքում այնտեղ 26 460 մմ տեղումներ են գրանցվում:

ԱՄՆ-ի Օհայո նահանգի Ուայնսբերգ քաղաքում արդեն հարյուր տարուց ավելի է՝ ամեն տարի հուլիսի 29-ին անձրեւ է գալիս:

Ներկայումս հնարավոր է արհեստական անձրեւ առաջացնել: Դրա համար չոր սառույցի կտորներն օդանավից նետում են ամպերի կուտակումների վրա: Ամպի մեջ ածխաթթուն պատվում է ջրով ու ձյան փաթիլի տեսքով իջնում ներքեւ: Նախքան գետնին հասնելը՝ փաթիլը հալչում է ու վերածվում անձրեւի:

Աշխարհում մոտավորապես հարյուր միլիոն մարդկանցից մեկը տառապում է անձրեւի ալերգիայից: Նրանց մաշկի վրա ջրի ցանկացած ազդեցության հետեւանքով առաջանում է կարմրություն եւ այտուցներ: Անձրեւի տակ մնալով՝ այդ մարդիկ կարող են նույնիսկ մահանալ:

Միացյալ Նահանգների Սան Ֆրանցիսկո քաղաքում օդերեւութաբանական կայանն անձրեւի մասին կանխատեսումը հայտնում է հավանականության աստիճանով, մոտավորապես այս տեսքով՝ 4/6: Սա նշանակում է, որ կայանում աշխատող 10 օդերեւութաբանները քվեարկում են՝ արդյոք տվյալ օրն անձրեւ գալու՞ է, թե՞ ոչ եւ քվեարկության արդյունքի մասին հայտնում ունկնդիրներին:

Կարկտի ամենամեծ հատիկները գրանցվել են Հնդկաստանի Գոփալգանջ քաղաքում՝ 1986 թ. ապրիլի 14-ին: Այդ օրը տեղացած կարկտի մեկ «հատիկը» կշռում էր շուրջ 1 կիլոգրամ: Կարկտի հետեւանքով զոհվում է քաղաքի 92 բնակիչ:

Մոլորակի ամենաանձրեւային վայրերը ձմռանը ջրի պակաս են ունենում: Անձրեւների սեզոնից հետո այնպիսի չորային ձմեռ է լինում, որ մարդիկ ստիպված են լինում ջուր գնել հարեւան քաղաքներից:

Սովորական անձրեւի թթվայնությունը (pH) 5,6 է: Եթե թթվայնության մակարդակը դրանից ցածր է, ապա ասում են, որ թթվային անձրեւ է եկել: 5,5 ցուցանիշի դեպքում ոչնչանում են բակտերիաները, իսկ 4,5-ի դեպքում՝ միջատները, երկկենցաղներն ու ձկները:

Հայ երգչուհի՝ Սյուզան ... | Թանկարժեք քար | Բուսական «կարագ» | Ապագան գուշակող քարոզիչ | Դեկորատիվ շինանյութ | Ստամբուլում լույս տեսնող օրաթերթ | Կոմունիստների գույնը | Ձկան տեսակ | Եկեղեցի Աշտարակ քաղաքում | Բանջարային բույս | Քաղաք Կանադայում | Տրանսպորտի կանգնելու տեղ | Ագեվազ

Նյութ՝ պատերի դրվագման համար | Հրավառություն | Աղացած ցորեն | Ռուս դերասան՝ ... Տիխոնով | Կենդանաշրջանի համաստեղություն | Հայ նկարիչ՝ Ստեփան ... | Կաթնասուն կենդանի | Կիեւի մեծ իշխան | Դարչոյի դերակատարը «Պեպո» ֆ-ում | Հայ ճարտարապետ՝ Ալեքսանդր ... | Մայրաքաղաքը՝ Թբիլիսի | Կացարան | Հայ լեզվաբան, բանասեր

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »õ Ñïñ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦ êäÀ

îÝûñ»Ý`
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý
¶ÉËë³íáñ ËÙµ³·Çñ`
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³. º÷ñ»ÙÙ³Ý
Ò»õ³íáñáÕ`
ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

º ñ»õ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îåª·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ï í»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³Ù³Ï³Ý`1074,
ïå³Ù³Ý³ÏÁ` 4870 ûñÇÝ³ï:
Ստորագրված է տպագրության
9.6.2011 թ.